

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի հաշվետվությունը 2018թ. Սևան համայնքում իրականացված ծրագրերի, աշխատանքների և բյուջեի կատարողականի վերաբերյալ

Հաշվետու՝ 2018թ-նն աշխատանքների ու ծրագրերի իրականացման առումով բավականին բարդ էր, սակայն համակարգված գործելաոճի, ճիշտ մշակված քայլերի, համայնք-բնակիչ համագործակցության շնորհիվ հնարավոր եղավ ապահովել համայնքային կյանքի բնականոն ռիթմը, միաժամանակ մշակել ռազմավարական քայլեր, զարգացման ծրագրեր առաջիկա ժամանակաշրջանի համար:

2018թ-ին համայնքային գործունեությունն իրականացվեց՝ համապատասխան Համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, ինչպես նաև համայնքի 2018թ. բյուջեին համապատասխան՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, բյուջետային հնարավորությունները և համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

Բյուջե - 2018

Համայնքի բնականոն կյանքի ապահովման, համայնքային տնտեսության կառավարման, ենթակառուցվածքների բարելավման, արդիականացման, ՀՈԱԿ-ների գործունեության, համայնքապահպան յուրաքանչյուր ծրագրի և նախաձեռնության հիմքում բյուջետային գործընթացի համակարգված կազմակերպումն է: Համայնքի զարգացման և առաջընթացի առաջին ցուցիչը բյուջեի կատարողականն է:

Տարվա աշխատանքները և ծրագրերն իրականացվել են՝ հիմք ընդունելով համայնքի զարգացման 5-ամյա ծրագիրը, ծրագրով 2018թ-ին ներառված բաղադրիչները և համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

Ինչպես ցույց տվեց 2018թ-ը, բյուջետային կարգապահությունը, բյուջեի նկատմամբ վերահսկողությունը և տնտեսման մեխանիզմների կիրառումը պետք է դարձնել աշխատանքների հիմքը, որի շնորհիվ էլ հնարավոր է գրանցել եկամուտների աճ և կատարել դրանից բխող արդյունավետ և պլանավորված ծախսեր:

Եկամուտներ

Համայնքի 2018թ. տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 89.5%-ով: 642.1մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 574.6մլն. դրամ, թերակատարումը կազմել է 127.5մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 6.4մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը 73.9մլն. դրամ է:

Նախորդ՝ 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 8.2%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 43.0մլն. դրամ:

2018թ. տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել 101.2%-ով / պլան՝ 515.8մլն. դրամ, փաստացի՝ 522.2մլն. դրամ /: 2017թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 16.2 մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2017թ. համեմատությամբ ավելացել են 3.2%- ով: Վարչական բյուջեում

սեփական եկամուտները կատարվել են 103.7%-ով / պլան՝ 172.6 մլն. դրամ, փաստացի՝ 179.0մլն. դրամ /: Նախորդ՝ 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 12.3%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 19.5մլն. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ թերակատարվել են փոխադրամիջոցների / 5.8% /, շենք-շինությունների գույքահարկերը /3.2% /, հողի հարկը պակասել է / 36.9% /. այս երեք եկամտատեսակներից միայն փոխադրամիջոցների գույքահարկը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են 2.1մլն. դրամի չափով:

2018թ. ընթացքում սեփական եկամուտների պլանը գերակատարվել է հետևյալ եկամտատեսակների գծով՝ պետական տուրքեր, վարձավճարներ և տեղական վճարներ՝ ընդհանուր առմամբ՝ 15.8մլն. դրամի չափով: Թերակատարումների հիմնական պատճառը բնակչության և իրավաբանական անձանց վճարումների մակարդակի նվազումն է, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքեր:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 59.5%-ով / ճշտված պլան՝ 182.5մլն. դրամ, փաստացի՝ 108.6մլն. դրամ /: Նախորդ՝ 2017թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն ավելացել են ընդամենը 52.6մլն. դրամով կամ 94.0%-ով: Նման գերակատարումը պայմանավորված է 2018թ-ին պետական բյուջեից հատկացված 37.1մլն. դրամ սուբվենցիայով : /Տես հավելված 1-ը/

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների համար գույքահարկի տարեկան պլանը նախատեսված է եղել 27.1մլն դրամ: Հավաքագրումը կազմել է 26.2մլն. դրամ / 96.8% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 10.6մլն. դրամ: 2018թ-ին հավաքագրվել է 6.7մլն. դրամ / 63.1% /, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 94.2%-ով. պլանային 77.2մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 68.0մլն. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 8.5մլն դրամի դիմաց կատարողականը կազմում է 8.3մլն. դրամ:

Պետական տուրքի գծով նախատեսված 5.0 մլն. դրամի դիմաց մուտքագրվել է 7.1մլն. դրամ / 143.0% /:

Ծախսեր

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2018թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 86.5%-ով: 650.3մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 574.3մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 76.8մլն. դրամ, կամ 14.0% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 99.6%-ով (պլան՝ 524.0մլն. դրամ, 521.9 փաստացի մլն. դրամ), թերակատարումը կազմել է 2.1մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 46.7%-ը կամ 243.7մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի

ծախսերը, 98.8մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները (102.3մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր (19.6%):

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2018թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 100.0% , մշակույթի ծախսերը՝ 99.2%:

2017թ. համեմատությամբ 2018թ. վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 71.1մլն. դրամ կամ 15.8%-ի չափով:

2018թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 59.5%-ով (պլան՝ 182.5մլն. դրամ, փաստացի ծախս՝ 108.6մլն. դրամ): Նախորդ՝ 2017թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսերը կազմել են 55.6մլն. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացել են 1.0 անգամ:

Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը 59.5մլն. դրամի չափով ապահովվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 56.2մլն. դրամի չափով ֆոնդային բյուջե հատկացման հաշվին, կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 51.7%-ը ապահովվել է ոչ կապիտալ՝ ընթացիկ եկամուտների հաշվին:

Համայնքի 2018թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 101.8մլն. դրամ /այդ թվում 22.2մլն. դրամի չափով նախորդ տարիների պարտք/ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար: 5.9մլն. դրամի չափով կատարվել են փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծախսեր:

Իրականացվել է շուրջ 79.6մլն. դրամի ասֆալտապատման աշխատանք: /Տես հավելված 2-ը /

Պարտքեր

2018թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը եղել են 77.3մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2018թ. ընթացքում մարվել է 22.8մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 22.4մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման, 0.4մլն. դրամ՝ նախագծային աշխատանքների մասով:

2018թ. ընթացքում նոր պարտքեր չեն կուտակվել:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքը կազմում է 54.5մլն. դրամ, այդ թվում՝ 52.6մլն. դրամը՝ համայնքի ֆոնդային բյուջեի գծով. 2014-2016թթ-ից տեղափոխված ասֆալտապատման աշխատանքների համար պարտքեր:

Աղբահանություն

2018թ. աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի քանակը կազմում է 402, որից՝ Սևան քաղաքում՝ 301, ավիամերձ տարածքում՝ 101:

01.01.2019թ. դրությամբ հավաքագրումները կազմում են 31.914.9 հազ. դրամ, որից՝

- բնակչություն՝ 21832.0 հազ. դրամ

- կազմակերպություններ՝ 6321.9 հազ. դրամ

01.01.2018թ. դրությամբ ավիամերձ գոտում հավաքագրվել է 3721.0 դրամ, իսկ 01.01.2019թ. դրությամբ՝ 3761.0 դրամ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորում և ծախսային մասեր

Համայնքում գործում է 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզում իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ: Մանկապարտեզներում ծնողական վճարները զրոյացված են, և ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվում է համայնքի կողմից

Հ/Հ	Անվանումը	Աշխատավարձ և հարկեր	Կոմունալ ծախսեր	Գրասեն. ծախսեր	Մնդի ծախսեր	Այլ	Համայնքի կողմից ֆինանսավորում	Ընդամենը ծախսեր
1	Թիվ 1 «Բողբոջ» մ/մ	24144.1	1983.6	101.1	5099.2	490.3	31398.5	31818.3
2	Թիվ 3 «Հեքիաթ» մանկ.	31153.4	2052.6	69.3	8966.9	1756.3	43479.0	43998.5
3	Թիվ 4 «Գալիք» մ/մ	24731.5	2182.8	96.5	7071.8	796.4	34497.6	34879.0
4	Գազարինի մանկ.	11578.4	652.1	62.2	2350.0	346.8	14937.0	14989.5
5	Թիվ 2 «Զարթոնք» մ/մ	14547.9	1207.7	47.5	-	1009.5	15953.0	16812.6
	ընդամենը	106155.3	8078.8	376.6	23487.9	4399.3	140265.1	142497.9

Քաղաքաշինություն

Քաղաքապետարանի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից տրամադրված ամփոփ տեղեկագիրն էլ արձանագրում է հետևյալը.

2018թ-ին աճուրդային կարգով օտարվել է 1788.21քմ մակերեսով հողատարածք, որից՝ 699.42քմ-ը՝ բնակելի կառուցապատման, 1088.79քմ-ը՝ հասարակական կառուցապատման համար:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 18 որոշում, համաձայն որի՝ օրինականացվել են ավտոտնակ, տաղավար, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող վարչական շենքերում, բնակարաններում օրինականացվել են ինքնակամ կատարված ձևափոխման աշխատանքները:

Ընդունվել է հասցեի տրամադրման 72 որոշում:

Տրվել է 39 շինարարական թույլտվություն, ճարտարապետահատակագծային 38 առաջադրանք:

Կայացվել է համայնքի ղեկավարի 20 որոշում հողի ուղղակի վաճառքի վերաբերյալ :

Կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 8 գործ :

Ներքին աուդիտ

2018թ. ներքին աուդիտ է իրականացվել համայնքի համայնքային ոչ առևտրային 5 կազմակերպություններում՝ «Սևանի կոմունալ սպասարկում և բարեկարգում», թիվ 1 «Բողոջ» մուր-մանկապարտեզ, թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզ, թիվ 4 «Գալիք» մուր-մանկապարտեզ, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում և համայնքապետարանի գնումների գործընթացի:

Ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականը կազմել է 87.5%: Թերակատարումը կապված է մի քանի ՀՈԱԿ-ների հարկադիր պարապուրդի հետ:

Հսկողություն է իրականացվել ծախսերի պլանավորման արդյունավետության, գնումների ընթացակարգի, արձակուրդների տրամադրման, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, սննդի տրամադրման գործընթացի, դասաժամերի բաշխման գործընթացի և այլ հարցերի վերաբերյալ:

«Տարվա տնտեսական ծրագիր»

Չարենց փողոցը Սևան քաղաքի համար ունի ռազմավարական նշանակություն, իր կարևորությամբ երկրորդն է, սակայն վերջին տասնամյակում հայտնվել են խիստ անմխիթար վիճակում:

Համաձայն համայնքի տարեկան աշխատանքային պլանի՝ 2018թ-ին նախապես մշակված ծրագրի՝ Չարենց փողոցում աշխատանքների իրականացման 1-ին փուլը ընդգրկել է Չարենց փողոցի վերջնամասը՝ Աբովյան-Չարենց փողոցների խաչմերուկից մինչև Աբովյան-Դեմիրճյան խաչմերուկ, որտեղ կատարվել են միաշերտ ասֆալտապատման աշխատանքներ:

Համայնքի համար կարևորագույն նշանակություն ունեցող Չարենց փողոցի՝ Չարենց-Ելենովկա փողոցների խաչմերուկից մինչև Չարենց-Աբովյան փողոցների խաչմերուկ գտնվող հատվածի միաշերտ ասֆալտապատման աշխատանքների 2-րդ փուլն իրականացվեց «Չարենց փողոցի հիմնանորոգում և արդիականացում» տնտեսական ուղղվածություն ունեցող ծրագրի շրջանակներում՝ ՀՀ կառավարություն-համայնք ֆինանսավորմամբ:

Համաձայն «Սևան համայնքի Չարենց փողոցի հիմնանորոգում և արդիականացում» տնտեսական ծրագրի իրականացման համար սուբվենցիայի հայտի պահանջի՝ ծրագրի արժեքի 60%-ը, այն է՝ 37մլն. 080 հազար դրամ, տրամադրվել է ՀՀ կառավարության կողմից, 40%-ը՝ 24մլն. 720 դրամ, համայնքային ներդրում է:

«Բարեկարգ և կառուցվող համայնք»

2018թ-ին ճանապարհաշինական աշխատանքների մեկնարկը տրվեց Հրազդան փողոցից, որն ունի կարևոր նշանակություն ոչ միայն Սևանի, այլ նաև հարակից բնակավայրերի համար:

Գործընթացում ընդգրկվեց նաև հարակից փողոցը՝ մինչև Նալբանդյան-Նաիրյան փողոցների խաչմերուկ: Փոսային նորոգման աշխատանքներին հաջորդել է Վլ. Կարապետյանի անվան հրապարակի նորոգումը և բարեկարգումը, որը շարունակվել է Նաիրյան փողոցում, և Նալբանդյան-Նաիրյան փողոցների խաչմերուկից Նալբանդյան փողոցով միացել է Հրազդան փողոցին:

Ճանապարհաշինարարական աշխատանքների մյուս հասցեն էլ եղել է Գագարին գյուղը, որտեղ իրականացվել են և փոսային նորոգման, և սաֆալտբետոնե ծածկի 2-րդային հումքի տեղադրման աշխատանքներ: Հիշյալ գործընթացն ընդգրկել է Երիտասարդական, Բաղրամյան, Գայի և Շիրազ փողոցները:

Փոսային նորոգումն ընդգրկել է 2050քմ տարածք:

Սաֆալտապատմանը հաջորդել են գծանշման աշխատանքները:

Գիշերային Սևանը լուսավոր, անվտանգ դարձնելու նպատակով ոչ միայն ապահովվել է լուսավորության ցանցի անխափան շահագործումը, այլ նաև մեկ տարվա ընթացքում լուսավորվել է ևս 11 փողոց Սևան քաղաքում, և Գագարին գյուղում /1 տարվա ընթացքում ընդգրկել է 5.5կմ/: Հավելենք նաև, որ բոլոր միկրոթաղամասերի բակային հատվածները լուսավորված են երկու փնջով:

Ուշադրություն է դարձվել նաև մասնակի տանիքաշինությանը, ջրհորդանների, ջրահեռացման ցանցերի վերանորոգմանը, մուտքերի բարեկարգմանը, որոնց շնորհիվ իրականացվել են բնակֆոնդի պահպանությանն ուղղված ընթացիկ աշխատանքներ /շահառու` 373 ընտանիք/:

Սևան քաղաքում արդեն գործում է երկու հանրային զուգարան:

Կառուցման մյուս հասցեն Պրահա-Վինոր այգին է, որը զբաղեցնում է շուրջ 4600քմ: Սա բարեգործության և համագործակցության ինքնատիպ համադրում է, որի շնորհիվ օրեր անց սևանցին և քաղաքի հյուրերը կունենան հանգստի և ժամանցի վայր:

Անցյալ տարի Սևանում աննախադեպ էին կառուցման տեմպերը. տրամադրվել է 37 շինարարական թույլտվություն, միմյանց են հաջորդել հանդիսությունների, առևտրի սրահների, անհատական բնակելի տների, մասնավոր բիզնես կենտրոնի կառուցման և ընդլայնման աշխատանքները:

Համայնք-մասնավոր հատված համագործակցությունը տալիս է իր արդյունքը հորեկների և հոսթելի բացմամբ, միջին և փոքր բիզնեսի խթանմանն ուղղված աշխատանքներով, որոնց շնորհիվ շուրջ 54 աշխատատեղ է բացվել համայնքում, սպասվում է ևս 50 նոր աշխատատեղի ստեղծում:

Բակային տարածքներում տեղադրվել են խաղամիջոցներ, կառուցվել են խաղահրապարակներ /2/:

2018-ին ՀՀ կառավարության հրատապ ծրագրերում են ընդգրկվել Սևան համայնքի Գագարին գյուղի ակումբի, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերի և Գագարինի դպրոցների շենքերի վերանորոգումները:

«Ներդրումային ծրագրեր»

Սևանի թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզին նոր զարթոնք ապահովելու համար մանկապարտեզն ընդգրկվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրերում:

Ծրագրի արժեքը 215մլն. է, որից 15մլն.-ը ներդրել է համայնքը: Աշխատանքներն արդեն ավարտված են: Օրեր անց մանկապարտեզն իր դռները կբացի համայնքի շուրջ 150 փոքրիկների առջև` նաև ներառական կրթություն:

Սևանի բժշկական կենտրոնի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներն էլ ավարտված են: Ծրագիրն իրականացվել է Համաշխարհային բանկի վարկային միջոցներով՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակներում:

Հիվանդանոցային նոր մասնաշենքում տեղակայված են կենտրոնի բոլոր հիվանդանոցային ծառայությունները: Մասնաշենքի հարակից տարածքում կառուցվելու են նաև համապատասխան ենթակառուցվածքներ:

Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի շենքում, ՀՀ պետական բյուջեի միջոցներով, իրականացվում է հիմնանորոգման մեծամասշտաբ ծրագիր: Քաղաքի մշակութային կյանքում այս ծրագրի շնորհիվ կարձանագրվի դրական փոփոխություն, որը հիմնավորապես կփոխի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատում իրականացվող աշխատանքների որակը և այդ շենքում գործող մի շարք կազմակերպությունների աշխատանքային պայմանները:

Այլևս իրողություն է «Վեռլիա ջուր» ՓԲԸ-ի համայնքային հերթական ծրագիրը, որը ներառել է քաղաքի 1-6-րդ միկրոթաղամասերի ջրագծերի և դիտահորերի կառուցումը /2կմ/: Սևանում ջրամատակարարումը 2 ժամից դարձել է 20-22 ժամ:

Ընթանում են Սևանի շաքարի գործարանի վերագործարկման աշխատանքները, որոնք ապահովվելու են 60-70 աշխատատեղ:

Ընթացիկ աշխատանքներ՝

- ✓ Փոսային և մասնակի ասֆալտապատում է իրականացվել 11 փողոցում, 2 հրապարակում /4500քմ/.
- ✓ Ընդլայնվել է գիշերային լուսավորության ցանցը - 11 փողոց /1 տարվա ընթացքում՝ 5.5կմ/.
- ✓ Կառուցվել է հանրային 2 զուգարան.
- ✓ Տեղադրվել են բակային խաղամիջոցներ /2 բակ/.
- ✓ Իրականացվել է բազմաբնակարան շենքերի ջրագծերի, կոյուղագծերի, ջրհորդանների, մուտքերի վերանորոգում, տանիքների մասնակի նորոգում /27 շենք/.
- ✓ Տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններում.
- ✓ Միջին և փոքր բիզնեսի խթանմանն ուղղված ծրագրերի արդյունքում համայնքում ստեղծվել է 54 նոր աշխատատեղ.
- ✓ Սևան քաղաքում բացվել է 2 հոթել, 1 հոսթել.

«Նորարար համայնք»

Սևան համայնքում իրականացվում է «ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագիրը՝ ԵՄ համաֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է զբաղվածության, որակի, կայունության, անվտանգության և աշխատաշուկայի որակական աճի վրա բազմակողմանի ազդեցության միջոցով նպաստել համայնքում և ողջ տարածաշրջանում կայուն տնտեսական աճի արձանագրմանը:

Երկամյա ծրագրի աշխատանքների առանցքում գերակա է լինելու Սևան համայնքի վերափոխումը՝ այն ֆինանսապես անկախ, տնտեսապես կայուն, սոցիալապես ապահով դարձնելը:

Սևանն անդամակցում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրին և դրա շրջանակներում էլ ներկայացրել է հաջողված և մրցունակ առաջարկ:

Բիզնես կենտրոնի միջոցով իրականացվող ծրագիրն էլ հավակնում է ունենալ տեսանելի արդյունք, քանի որ առաջնահերթություններ են ընտրված մի շարք կարևոր ուղղություններ՝ ֆիզիկական ենթակառուցվածքների տրամադրում բիզնես համայնքին, համագործակցություն և կապերի ուժեղացում խորհրդատվական և տեխնիկական աջակցություն գործարարներին և աշխատանք փնտրողներին:

Գեղարքունիքի մարզի համար այս կենտրոնը լինելու է ինկուբատոր, որտեղ ամեն օր մշակվելու են գաղափարներ ու տարածվելու:

«ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագրի առանցք հանդիսացող բիզնես կենտրոնը, որն արդեն կառուցվում է, ներառելու է աշխատանքային 15 համընդհանուր տարածքներ գործարարների համար, աշխատանքային հանդիպումների նորարական, կոնֆերանս սենյակներ, տեղեկատվական և խորհրդատվական կենտրոններ, որտեղ իրականացվելու են բիզնեսի զարգացման խորհրդատվություն և դասընթացների կազմակերպում, մասնավորապես՝ բիզնես և ռազմավարական պլանավորում, նորարարության տեղայնացում, շուկայական կապեր, արտահանում ներկրում ուղղություններով:

Կենտրոնի մասնագետները կօժանդակեն նորամուծություններին, կաջակցեն բիզնեսների ֆինանսական և շուկայական կապերի հզորացմանը, Սևանի տարածաշրջանում աշխատանք փնտրողներին մասնագիտական վերապատրաստումների միջոցով կտան հնարավորություն մրցունակ լինելու աշխատաշուկայում, միաժամանակ կաջակցեն աշխատանքի տեղավորման հարցում:

Սևան համայնքը ծրագիրն իրականացնում է Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի հետ:

2018թ. կատարված աշխատանքներ – բիզնես կենտրոնի կառուցում, տեղեկատվական գրքույկների տպագրում

Գումար – 17.791.420 հազ. դրամ

Աշխատատեղ – 4

2019թ. – բիզնես կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտ

Աշխատատեղ – 6

Գումար – 60մլն. դրամ

«Տարվա նախաձեռնություն»

«Սևան» երաժշտական փառատոնը, որն արդեն անցկացվում է 4-րդ անգամ, 2018թ-ին լճի ափից եկավ քաղաք:

Երկօրյա փառատոնը համախմբման հիանալի հնարավորություն ընձեռեց. միմյանց հանդիպեցին Հայաստանի և արտերկրի տարբեր երաժշտախմբեր, անհատ

կատարողներ, խմորվեցին նոր գաղափարներ, հենց տեղում ծնվեցին երաժշտական կատարումներ, ինչպես նաև համագործակցության ևս մեկ հնարավորություն էր Սևան և Գրենոբլ քաղաքների համար:

Փառատոնի հաջողություններից մեկն էլ այն էր, որ առաջին անգամ այս պրոեկտին դեմքով շրջվեց ՀՀ մշակույթի նախարարությունը:

«Մարզական համայնք»

Սևանի մարզական կյանքում իրադարձային է ֆուտբոլի մարզադաշտ ունենալը, որի շինարարական աշխատանքները մեկնարկել են անցյալ տարվա մայիսին և շուտով կհատեն վերջնագիծը: Սևան համայնք-Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա համագործակցության արդյունքում ֆուտբոլի մարզադաշտի կառուցմամբ բացվում են մարզական նոր հեռանկարներ:

Դպրոցի շինարարությանը զուգահեռ կբարեկարգվի քաղաքային այգու տարածքը, որը ներառում է մի շարք աշխատանքներ՝ ճեմուղու կառուցում, այգու մուտքի կամարի վերականգնում, պարսպապատում, հասարակական զուգարանի կառուցում:

Ֆուտբոլի մարզադաշտի կառուցմանը զուգահեռ ստեղծվել է «Յունիոր Սևան» ակումբը, կազմավորվել է համանուն թիմը, որն այս տարի մասնակցում է ՀՀ Առաջնության 1-ին խմբի խաղերին և մրցանակային աղյուսակում զբաղեցնում է պատվավոր 1-ին հորիզոնականը:

Մարզական ևս մեկ իրադարձություն, որը սևանցիներին հպարտանալու և ոգևորության մեծ ալիք հաղորդեց, մայիս ամսին Ուկրաինայի Լուցկ քաղաքում կայացած ուժային եռամարտի աշխարհի առաջնությունն էր:

Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի սաները Վարազդատ Հակոբյանը և Կարեն Առաքելյանը մեծ պատասխանատվությամբ և պատրաստվածությամբ հանդես եկան այդ առաջնությունում, որի արդյունքը 29-ամյա Վարազդատ Հակոբյանի չեմպիոնի կոչմանն արժանանալն էր և 15-ամյա Կարեն Առաքելյանի մրցանակակիր դառնալը:

Վարազդատ Հակոբյանը նաև «Դյուցազնագրքի» հերոս է:

Թաեքվոնդոյի աշխարհի երիտասարդական առաջնությանը մասնակցած Դավիթ Թորոսյանն էլ դարձել է 1-ին մրցանակակիր, իսկ Մոչիում էլ «Սև ծովի Գավաթ-2018» մրցաշարում նվաճել է ոսկե մեդալ:

«Համագործակցող համայնք»

2018թ. շարունակվեց Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցությունը: Համայնքի 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններում և մարզադպրոցում տեղադրվել է արևային ջրատաքացուցիչ:

Սևանի բժշկական կենտրոնը համալրվել է նոր ու արդիական բուժսարքավորումներով:

Մարտ-ապրիլ ամսիններին համայնքում անցկացվել են ֆրանկոֆոնյան օրեր, հունիս-օգոստոս ամիսներին՝ ֆրանսերենի ուսուցման ամառային դպրոցի դասերը, որն այս տարի ուներ 100-ից ավելի ունկնդիր:

Այս համագործակցության շրջանակներում է գործում նաև զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակը, ամռան ամիսներին էլ թերակղզում գործում է տեղեկատվական շարժական գրասենյակը:

Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում Սևանում հյուրընկալվել էր Գրենոբլի պատվիրակությունը՝ քաղաքապետ Էրիկ Պիոլի գլխավորությամբ:

Սևան համայնքը ապակենտրոնացված համագործակցություն է հաստատել Գրենոբլ /ֆրանսիա/, Բրոդնիցա /Լեհաստան/, Ավիլիանա /Իտալիա/ քաղաքների, Պրահա-Վինոր /Չեխիա/, Օսիպովիչ /Բելառուս/, Էրեբունի վարչական շրջանների հետ:

Սևան համայնքն ընդգրկվել է «Աճի բևեռներ» ծրագրում, քանի որ ունի տնտեսական զարգացման ներուժ, զբոսաշրջային ուղղվածություն:

Համայնքն ընդգրկված է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարում» ծրագրում:

Եռամյա կենսագրություն ունեցող ՄԱԿ-ի «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել Սևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ֆինանսավորման ապահովման համար ստեղծել նպատակային վերականգնվող ֆոնդ:

Սևան քաղաքում ընտրված ցուցադրական փողոցն է Շահումյանը, որտեղ էլ տեղադրվել են լուսավորության լուսադիոդային նոր լուսատուներ: Անցած տարի Շահումյան փողոցում լուսավորության համակարգի փաստացի տնտեսումը կազմել է 734.3 հազ. դրամ:

2018թ-ի դեկտեմբերին ծրագիրը հատել է վերջնագիծը: Ծրագրի ողջ ընթացքում հնարավոր է դարձել խնայել 3.2մլն. դրամ:

ՅՈՒՆԵՍԿՕ- «Ուսումնառող քաղաքներ» ծրագրի շահառու է Սևանը:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունն 2018թ. փետրվարից մեկնարկել է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» երկամյա ծրագիրը:

«Երիտասարդական համայնք»

Սևան-Գրենոբլ համագործակցության շրջանակներում «IRAPA» ֆրանս-հայկական հարթակի, «Tourisme Guegharkounik» և «Goris Tourist Info Center» ֆեյսբուքյան էջերի նախաձեռնած «Երիտասարդական Կրեատիվ Դրամաշնորհ» ծրագրի շրջանակներում համայնքում իրականացվում է «Հայկական փոստային բացիկ» ծրագիրը՝ «Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի երիտասարդների կողմից, որն ունի զբոսաշրջային և ճանաչողական ուղղվածություն:

Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքում հուլիս ամսին կայացած DIVERCITES միջազգային փառատոնին Հայաստանը ներկայացնում էր Սևան քաղաքը: Սևանցի երիտասարդներն արդեն 4-րդ անգամ են մասնակցում մշակութային ինքնատիպ երկխոսությանը:

Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքը, քույր քաղաքներ կարգավիճակով, համագործակցում է աշխարհի 20 քաղաքների հետ: Ապակենտրոնացված ցանցի գործարկման լավագույն և արդյունավետ միջոցներից է նաև երաժշտական փառատոնի անցկացումը, որն ունի

13-ամյա կենսագրություն, անցկացվում է 2 տարին մեկ անգամ և կրում է DIVERCITES /բառացիորեն՝ բազմազանություն/ անվանումը:

Սևանը ներկայացնող երիտասարդների ընտրությունը կատարվել է Սևանի համայնքապետարանի կողմից:

Համայնքը մայիս ամսին մասնակցել է «Արի, պարի Քոչարի» համահայկական ֆլեշմոբին՝ 4 պարային խմբերի մասնակցությամբ:

«Սոցիալական համայնք»

2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին միանվագ ֆինանսական օգնություն է ստացել 437 քաղաքացի, տրամադրվել է 10մլն. 395 հազ. դրամ:

Չոհված ազատամարտիկների կանանց, մայրերին, զինհաշմանդամ կանանց, պատերազմի վետերաններին հատկացվել է 400.000 դրամ:

Սոցիալական բեռը թեթևացնելու ծրագրերից մեկն էլ համայնքի մանկապարտեզներում ծնողական վարձավճարների գրոյացումն է: Համայնքում գործում է 5 մանկապարտեզ, որտեղ հաճախում է 653 երեխա: Մինչ անվճար դառնալը, վարձավճարը մեկ երեխայի հաշվով ամսական կազմել է 6000-7000 դրամ:

5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար համայնքում թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա գործում է նախակրթարան, որտեղ հաճախում է 56 երեխա:

Կոմունալ տնտեսություն

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Մենք այս ոլորտում ունենք կոնկրետ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառույթները՝ աղբահանումից մինչև կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչև լուսավորության ցանցի գործարկում:

Անշուշտ, դժվարությունները ամեն քայլափոխի են. դրանք վերաբերում են և կազմակերպչական հարցերին, և կադրերին, և տեխնիկական վերազինմանն ու համապատասխան մշակույթի ձևավորմանը: Անցած ամիսների ընթացքում կոմունալ տնտեսության տեխնիկական վերանորոգվել է, ձեռք են բերվել անհրաժեշտ պահեստամասեր:

Կոմունալ տնտեսության աշխատանքներում գրանցվել են էական տեղաշարժեր:

Ձմռան ամիսներին իրականացվող աշխատանքների առանցքում ձյան մաքրումն ու տեղափոխումն էր:

Ուշադրության կենտրոնում համայնքի ողջ տարածքն էր՝ գլխավոր փողոցից մինչև երկրորդական փողոցներ, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը, Գազարին գյուղը: Ձմամաքրման աշխատանքները շարունակվել են նաև հանգստյան օրերին: Ձյան տեղումներին զուգահեռ իրականացվել է մաքրման գործընթացը:

Մաքրմանը հաջորդել է ճանապարհների՝ ավագով մշակման գործընթացը, որի արդյունքում երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար ապահովվել է բնականոն վիճակ:

Գարնանը աշխատանքների ուղղվածությունը փոխվել է՝ առանցքում մնալով մաքրությունը: Էտման և սանիտարական հատման աշխատանքներին հաջորդել են ծառերի բների սպիտակեցման, կանաչ տարածքների խնամքի, ձևավորման աշխատանքները:

Քաղաքում ավելացել են նաև աղբամանները:

Կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 37979.4 հազ. դրամ /աղբահանության գծով. աղբահանության գումարները մուտքագրվում են համայնքային բյուջե/, պարտքերի մարման գծով սուբսիդիա է տրամադրվել 10750.0 հազ. դրամ:

Սևան համայնքն ակտիվորեն մասնակցել է նաև «Մաքուր Հայաստան» նախաձեռնությանը: Համայնքում անցկացվել է 1 համապետական շաբաթօրյակ: Մասնակիցների թիվը հասնում էր հազարի, ներգարվել է նաև անհրաժեշտ քանակով տեխնիկա:

Համայնքապետարան հասցեագրված դիմումներ և գրություններ

Սևանի համայնքապետարանում ամփոփվել են ընթացիկ տարվա արդյունքները:

Սևանի համայնքապետարանի աշխատակազմում ամփոփվել է 2018թ-ի փաստաթղթաշրջանառությունը: Համաձայն աշխատակազմի կողմից տրամադրված տվյալների՝ 2018թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին համայնքի ղեկավարին է դիմել 1129 քաղաքացի:

2017-ի նույն ժամանակահատվածում դիմողների թիվը եղել է 1099: Բազմաբնույթ դիմումների շարքում գերակշռող են սոցիալական ուղղվածություն ունեցողները, որոնց, ինչպես նաև մյուս դիմումներին, օրենքով սահմանված կարգով տրվել է սպառիչ պատասխան:

Իրավաբանական անձանցից, ՀՈԱԿ-ներից, համայնքում գործող կազմակերպություններից, ընկերություններից, հաստատություններից ստացվել է 620 գրություն: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 533:

Գեղարքունիքի մարզպետարանից, գերատեսչություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից ստացվել է 620 գրություն, տեղեկատվության տրամադրման հարցում: 2017թ-ին այն եղել է 439:

Համայնքապետարանից ուղարկված գրությունների թվային պատկերն այսպիսին է՝ համայնքի ներսում՝ 394, համայնքից դուրս՝ 498:

Գրությունների, դիմումների մուտքը և ելքը կատարվել է էլեկտրոնային, փոստային և առձեռն եղանակներով:

Ավագանու գործունեություն

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին:

2018-ին համայնքի ավագանին գումարել է 7 նիստ, կայացրել է 40 որոշում:

Ավագանու գործունեության թափանցիկության և հրապարակայնության նպատակով նիստերը հեռարձակվում են առցանց, ապա տեղադրվում պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Քաղաքացիական հասարակություն- համայնք

Քաղաքացիական հասարակության ստեղծման ճանապարհին անհրաժեշտ է բոլոր այն կառույցների ու կազմակերպությունների գործունեությունը, որոնք հնարավորություն կտան մեր աշխատանքները դարձնել առավել ժողովրդավար, թափանցիկ և ընկալելի:

Համայնքապետրանն աշխատում է համայնքում գործող ՀԿ-ների և ասոցիացիաների հետ, միասին հեղինակում են համաքաղաքային միջոցառումներ, հանդիպումներ:

Համայնքապետրանի պատասխանատուները բազմիցս են մասնակցել ՀԿ-ների աշխատանքային հանդիպումներին և սեմինարներին, ներկայացրել տարբեր ոլորտներում մշակված ծրագրերը:

Բավականին ակտիվ է կապը համայնքում գործող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ: Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը՝ մեր գործունեությունը կառուցում ենք գործնական - ընկերային հարթության վրա, որը բավականին արդյունավետ է նաև համայնքում այդ կազմակերպությունների կողմից համայնքային կարիքների բացահայտման, առաջնահերթությունների որոշման և զարգացման ծրագրերի ներդրման համար, համատեղ միջոցառումներ և քննարկումներ կազմակերպելիս:

ՀՈԱԿ-ների գործունեություն

Համայնքային կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց նպատակային և ամենօրյա գործունեության շնորհիվ

հնարավոր է դառնում կազմակերպել երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, մարզական, մշակութային ուղղվածության ծրագրերը:

Պայմանավորված մշակույթի պալատի հիմնանորոգմամբ՝ ժամանակավորապես չեն գործում այդտեղ տեղակայված ՀՈԱԿ-ները՝ Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցը, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգը և համայնքային մշակութային կենտրոնը:

Համայնքի 5 մանկապարտեզներից մեկում՝ թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզում, տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի ֆինանսավորմամբ իրականացվել է հիմնանորոգման ծրագիր, որի աշխատանքները կվերսկսվեն այս տարվա մարտին: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործընթացը կազմակերպվում է՝ համաձայն ԿԳ նախարարության կողմից հաստատված չափորոշիչների:

Համայնքի նախակրթարանները աշխատում են ծանրաբեռնվածությամբ՝ իրականացնելով երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, խնամքի, անվտանգ միջավայրի ապահովման գործառույթները: Նախադպրոցական այս հաստատություններն ապահովում են պահանջվող չափորոշիչները:

2017թ. մարտի 1-ից մանկապարտեզներում ծնողական վարձավճարները զրոյացվել են, որը նաև իմ նախընտրական ծրագրերի դրույթներից է: Սոցիալական այս ձեռնարկի շնորհիվ երեխաների համար ստեղծվել է հավասար պայմաններ:

Համայնքում գործում են նաև նախակրթարաններ, որոնցից մեկը «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա, երկուսը՝ Ցամքաբերդի և Գոմաձորի միջնակարգ դպրոցների հենքի վրա:

2018-2019 ուստարում մանկապարտեզներից 1-ին դասարան է հաճախել 279 երեխա:

Ապակենտրոնացված համագործակցություն

Սևանը ներհամայնքային ծրագրերին, աշխատանքներին զուգընթաց իրականացվում են գործնական-ընկերային ապակենտրոնացված հարաբերությունների զարգացմանը միտված ծրագրեր: 2015-ին համայնքը և Երևանի Էրեբունի վարչական շրջանը դարձան գործընկերներ՝ ստորագրելով համագործակցության հուշագիր, համաձայն որի՝ կազմակերպվելու են օրինակելի փորձի փոխանակումներ, փոխայցելություններ, ընդհանուր նշանակության խնդիրների քննարկումներ տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում:

Հուշագրի ստորագրմանը հաջորդել են մի շարք փոխայցելություններ, որոնք եղել են և ճանաչողական, և ուսուցողական, և մշակութային: 2018թ. հունվար-փետրվար ամիսներն էլ աչքի ընկավ ճանաչողական և փորձի փոխանակման այցերով, սոցիալական, կրթական ծրագրերի իրականացմամբ:

Ապակենտրոնացված համագործակցության ոլորտում Սևան համայնքն ունի 14-ամյա փորձ Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի հետ՝ զբոսաշրջության, ֆրանսախոսության, առողջապահության ուղղություններով:

Ֆրանսախոսության տարածման գործում արդեն իններորդ տարին գործում է ֆրանսախոսության ուսուցման ծրագիրը, որն անցկացվում է Սևանում ամռան ամիսներին: Դասընթացների ունկնդիրներն են աշակերտներն ու ուսանողները, երիտասարդ մասնագետները: Այն իրականացվում է Գրենոբլի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ՝ «Ֆրանս-ֆորմասիոն ինտերնասիոնալ» կազմակերպության դասընթացավարների միջոցով:

Համայնքը ևս ունի իր ներդրումը ծրագրի իրականացման գործում:

Մարտ-ապրիլ ամիսներին համայնքը միացավ ֆրոնկոֆոն ընտանիքին՝ իրականացնելով Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ՝ համայնքի կրթական, մշակութային, երաժշտական, ստեղծագործական հաստատությունների մասնակցությամբ:

Այս համագործակցության շրջանակներում է գործում նաև զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակը, ամռան ամիսներին էլ թերակղզում է գործում տեղեկատվական շարժական գրասենյակը:

Ծրագրեր համայնքապետարանի գործունեության բարելավման նպատակով

Թափանցիկ աշխատատեղի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում է համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները: Համայնք-մարզապետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել որակյալ, ռավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների: Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը:

Կարծում եմ՝ բոլորիս ցանկությունն էլ մեկն է՝ ապրել լավ ու բարեկեցիկ պայմաններում, իսկ տեղական իշխանության համար այդ ցանկություններն իրագործելն օրակարգային են և ամենօրյա աշխատանք պահանջող: Այդ ամենի իրականացման համար պետք է համախմբենք մեր ջանքերն ու կարողությունները:

Տեղական իշխանությունն իր աշխատանքները կառուցում է՝ գերակա համարելով համայնքապահպան ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Ու որպես այս ամենի հանրագումար՝ Սևանը նոյեմբերի 10-ին՝ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման օրը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ու Հայաստանի համայնքների միության կողմից արժանացավ «Տարվա լավագույն համայնք» մրցանակին: